



Զ. ՅԱՐԻ 23 ՇԵՎՂԱԼ 1291 ԳԱՍԸՄ 26 ՉՈՐԵՔԵԱԲԹԻ 20 ՆՈՅԵՄԲԵՐ 1874 Ն. Տ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 2 ԹԻՒ 1395

### Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

#### Հ Ր Ա. Ի Ե Ր

ԱՌ Ա. Չ. ԵՐԵՍՓՈՒԱՆՍ

Ազգային ժողովը նիստ ունի յա. յառաջիկայ ուրբաթ 22 նոյեմբեր 'ի Ղալաթիս:

Ատենը պիտի բացուի ժամը 6ին և գոցուի 10 ին:

Կը հրահարեմ Երեսփոխան էֆէնտի ներք՝ որ փութան կատարել ազգասիրական պարտաւորութիւնն:

Մնամ աղօթարար

ՊԱՏՐԻԱՐԳ Կ. ՊՅԼՍՈՅ

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

16 նոյմ. 1874

ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պօլիս

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ամբողջացում Գաղ. ժողովոյ.

2. Կարցում իմիէկճեան էֆ. ի առ նախորդ կրօն. ժողովն

3. Ընդունելութիւն հին ատենադրութեանց

4. Փոփոխեալ տրամադրութիւնք Ազգ. Սահմանադրութեան:

Ատենադպիր

Ս. Պ. Պ. ՓԱՓԱՉԵԱՆ

Անցեալ շաբթու խիստ ծանր ու ցաւալի դէպք մը պատահեցաւ, որն որ պէտք է այլոց իզգուշութեան դաս մը ըլլայ:

Ընթերցողք գիտեն թէ թաշճի պաշի Առաքել էֆէնտի անժառանգ մեռաւ՝ իր վրայ գտնուելով 30ի մօտ կալուած՝ որոց բոլորն ալ մահիւլը վա. յելեց. ասոնց մէջ էր նաև Առաքել էֆ. ի իւր ամուսնոյն հետ բնակած տունը:

Այս տունը մահիւլէն աղքեցութեան տէր այլազգիի իր ծախուելով՝ ամբիջա. պէս հրաման կուղայ Ոստիկանութեան պաշտօնէութեանն տունը գիշերանց պարպելու և այլազգիին յանձնուելու:

Խեղճ կինը կուլայ, կողբայ, կը պաղա. տի, բայց 'ի զուր, զի հազիւ հազ մէկ գիշեր մնալու արտօնութիւն կըլլայ ի. ընն թաղեցուց միջամտութեամբ. և երկրորդ անտուն տունը կը յանձնուի այլազգիին:

Ահա այսպէս Առաքել էֆ. իւր ան. հեռատեսութեամբ և կամ կասկածո. տութեամբ իւր ազգը 30 կտոր կալ. ուածներէ զրկելէն զատ կը զրկէ նաև իւր ամուսինը՝ իր բնակած տանը մէջ բնակելու մայրմունքէն. բայց միթէ Ա. առաքել էֆ. չէր կրնար իւր կենդա. նութեանը՝ իւր կալուածատիրական ի. ըրաւունքը լիովին ապահովելովն հան. դերձ՝ իւր ամուսինը գոնէ իւր մահ. ուանէն վերջը բնակարանի մը տէր ը. նել: Այո՛, կրնար և շատ աղէկ կըր. նար, բայց չըրար, և թերևս տակա. լին շատ մարդիկ կան այս կարգէն որք կրնան բայց չեն ըներ, սակայն գիտե. լու արժանի կէտն այն է որ՝ այս կար. գի մարդիկ այսպէս վարուելով հան. դերձ՝ թէ՛ 'ի կենդանութեան և թէ՛ մահուան միջոցին՝ ամեն կերպ պատիւ և յարգանք կը վայելեն Ազգին կողմէն թէ՛ կրօնապէս և թէ՛ քաղաքականա. պէս:

Մարդիկ երկու տեսակ կեանք ու. նին. այն է կրօնական կեանք և ազ. գային կեանք:

Կրօնական կեանքը յաւիտենական կենաց սկզբունքն ընդունած ըլլալով կը գտնուին բարեպաշտ մարդիկ որ իրենց հոգւոյն համար կտակներ կընեն. թէև այս զգացումն ալ մեր մէջ երթողով պաղելու վրայ է. սակայն մինչդեռ քաղաքակիրթ ազգերն՝ իրենց ազգա. յին կեանց համար ալ յաւիտենակա. նութեան սկզբունքն ընդունելով՝ իրենց կտակներովը յաւիտեան կ'ապրին, մեք մեր ազգային կենաց համար յաւիտե. նակենութեան սկզբունքէն բոլորովին անտարբար թողրովին այդ մասին ան. տարբեր ենք և գրեթէ բնաւ չէ տես. նուած մէկը՝ որ իւր կտակաւը իր ազ. գային կեանքը յաւիտեան շարունա.

կած ըլլայ, այս կարգէն էր նաև Թաշ. ճի պաշի Առաքել էֆէնտին՝ որ իւր կալուածները ազգին չը կտակելով՝ իր նիւթական մահուամբը՝ իր բարոյական կամ ազգային կեանքն աւարտեց, ու եղաւ ոչինչ, մինչդեռ եթէ կտակ մը թողլով մեռած ըլլար, դորա շնորհիւը յաւիտեան պիտի ապրէր՝ ազգին օրհ. նութիւնը յաւիտեան վայելելով և ան. մահից կարգը դատուելով:

Եւ սակայն ո՞վ արդեօք յիշեցուց անոր՝ իւր ազգային յաւիտենական կե. նաց շրջանը մտնելու պարտաւորութիւ. նը, եթէ չենք սխալիլ մեր կարծեաց մէջ կրնանք ըսել թէ ոչ ոք: Ի կամ եթէ ըսողներ ալ եղած ըլլան՝ ո՛ր գիտէ թէ որ աստիճան թեթև կերպով իրօտ. են՝ որ տպաւորութիւն չէ ունեցած իւր վրայ. ապա թէ ոչ ո՞վ կրնայ ըսել թէ Առաքել էֆէնտին իր ազգէն ու ամու. սինէն աւելի այլազգը կը սիրէր և կամ յաւիտեան ապրելէն աւելի աննշան մահ մը կ'ընտրէր. եթէ ուրիշներ զը. պարտեն ալ զայն, մեք զայն քիչ շատ 'ի մօտոյ ճանչելուս՝ այդպիսի բան մը չենք կրնար ըսել:

Մեր մէջ ուրիշ նախապաշա. բում մ'ալ կայ որ մեր այս կորուստը կը դիւրացնէ. այն է՝ մահու խօսքը այսպիսեաց բանալէ չափէն աւելի քաջ. ուիլ, մինչդեռ ամենևին քաջուելու բան մը չը կայ, քանի որ ամեն օր մա. հը աչքերնուս առջև կեցած իր կոտո. բածը կը շարունակէ:

Արդ այս մեծ խնդրոյն առջև մեծ մասամբ պատասխանատու են մեր եկե. ղեցականները, բայց եթէ ճշմարտը պիտի խօսինք՝ պէտք է խոստովանիլ որ մեք ալ՝ մեք իսկ այնքան հարուածե. ցինք եկեղեցականութիւնը՝ որ մարդոց քով աղքեցութիւն չմնաց և եկեղե. ցականաց աղքեցութիւնը կոտորելու ա. ւանդական քաղաքականութիւնը բա. ւականէն աւելի յառաջ գնաց. սակայն սխալին ամօթ չէ, այլ սխալը ճանչ. ցուելէն վերջը՝ դորա վրայ յամուս մը. նալն ամօթ է. ուստի եթէ ճանչցանք

եկեղեցականաց յարգը կոտորելու սը-  
խանիս, եթէ տեսանք ատկէ յառաջ  
եկած ծանր վտանգները, ասկէ ետքը  
գոնէ՛ այդ ճանքան չը շարունակենք,  
և տանք եկեղեցականաց հարկ եղած  
յարգանքն ու ազդեցութիւնը՝ և վո-  
խարէն պահանջենք իրենց պարտաւո-  
րութեան գործադրութիւնը :

### Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Լ Ո Ւ Ր Ք

#### Գ Ա Ղ Ղ Ի Ա

Բարից 30 նոյեմ:

Բարիցի քաղաքապետական ժողո-  
վոյ ընտրութեան քուէարկութիւնը հե-  
տեւալ արդիւնքն ունեցաւ :

53 Արմատականք

10 Չափաւոր հանրապետականք

11 Պահպանողականք

3 անդամ ալ համեմատական քը-  
արկութեան մնացին :

Ազգային ժողովոյ նիստերը բացուե-  
ցաւ : Այսօրուան նիստը բոլորովին ան-  
կարևոր էր, վաղը դիւաններուն ընա-  
րութիւնը պիտի կատարուի, չորս քար-  
թի օրն ալ նախագահական պատգա-  
մագրին ընթերցումը տեղի պիտի ունե-  
նայ :

Շամպորի կոմսին մէկ նամակը յոր-  
դոր կը կարգայ խորհրդարանի մէջ ու-  
նեցած իւր կուսակիցներուն որ միապե-  
տութեան վերահաստատութիւնը ու-  
շացնող բան մ'ալ չը գործեն :

Ազգային ժողովոյ բոլոր կուսակցու-  
թիւնք ալ համամիտեն քաղաքական  
խնդրոց վիճաբանութիւնները տարե-  
դրվի տոներէն ետքը թողելու :

Չախակողմեան երեսփոխանք որո-  
շած են սահմանադրական օրինաց վրա-  
յի վիճաբանութիւնը յետաձգել, աջա-  
կողմն ալ ասոնց օրինակին պիտի հետևի :

#### Ա Ն Գ Ղ Ի Ա

Լոնտրա 30 նոյեմ:

Պանքան դրամադեղչը Օ/Օին 6ի հա-  
նեց :

Անգղիոյ միջամտութեանը շնորհիւ  
կը յուսացուի թէ րուսմանիոյ հետ կըն-  
քուելիք անւտրական պայմանագրու-  
թեանց վերաբերեալ խնդիրը գոհացու-  
ցիչ լուծում մը կ'ստանայ :

#### Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Պերլին 30 նոյմ:

Պաշտօնական ազդարարութիւն մը  
կը ստէ այս տեղի լրագրաց հրատարա-  
կած այն զրոյցը, որպէս թէ 1866ին  
բանակցութիւններ եղած ըլլան Սաքսո-  
նիոյ թագաւորին փոխարինական հա-  
տուցում մը տալով սորա երկիրը Բը-  
րուսիոյ հետ միացնելու :

### Ն Ե Ր Ք Ի Ն

Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն Ի Ն Ե Ր Ք Ի Ն Վ Ի Ճ Ա Կ Ը

Երկրի մը բուն և ճշմարիտ հարստու-

թիւնը՝ իւր աշխատութեանն արտադ-  
րած արդիւնքն է, և ոչ թէ այդ երկ-  
րին մէջ գտնուած ոսկոյ կամ արծա-  
թի բազմաբար առուել կամ նուազ  
մեծ քանակութիւնը : Երկիր մը, իւր  
դրացի մէկ երկրին հետ բազդատմամբ  
որքան շատ ոսկի և արծաթ մետաղի  
քանակութիւն մ'ունենայ, եթէ չ'ու-  
նի՝ նոյն դրացի երկրին աշխատութեան  
արդեանցը չափ արտադրութիւն մը,  
ինքը անկէ աղքատ է :

Չը կայ երկիր մը որ այս վերջին  
2—3 տարուան միջոցին, Գաղղիայէն ա-  
ռած պատերազմական տուգանքներուն  
պատճառաւ մեծագումար դրամի աէր  
Գերմանիոյ չափ մետաղեայ քանակու-  
թիւն մը դիզած ըլլայ, սակայն և այն-  
պէս Գերմանիա այսօր կամ վաղը դը-  
րամական մեծ տաղանապի մը գահու-  
վէժ անդունդին եզրը կը գտնուի : Սա  
արդարեւ Գաղղիայէն 3 հազար միլիոն  
Փրանքի դրամական տուգանք մ'ա-  
ռաւ, որոյ 2 հազարը իւր ըրած պա-  
տերազմին ծախքերը գոցելու յատկա-  
ցրեալէն ետքը, մնացեալ 3 հազարն՝ ալ  
ֆոխանակ արտադրելի արդեանց աշ-  
խատութեան դիւրութեանը և բարգա-  
ւաճմանը ծառայեցնելու՝ ընդհակառակն  
բոլորն ալ իւր զինուորական սպառազի-  
նութեանց և ամբուլթեանց ծախուցը  
գործածեց, հետեւաբար Գերմանիոյ  
ձեռարուեստական և աշխատութեան  
վիճակը այդ մեծագումար հարստու-  
թեանէն բնաւ օգուտ մ'ալ չը տեսաւ :

Գաղղիա այսօր, իւր այդ հատու-  
ցած պատերազմական տուգանացը վը-  
րայ, գարձեալ հարուստ կը գտնուի,  
իւր օտար երկրէ ներս ընդունած աշ-  
խատութեան արդիւնքէն աւելի՛ ար-  
դիւնք դուրս կարենալ հանելուն պատ-  
ճառաւ, մինչդեռ Գերմանիա, այս-  
չափ դրամն իր մէջ առնելովն հան-  
դերձ, դրամական նեղութիւն և մեծ  
տաղանապ մը կրելու կը պատրաստը-  
ուի, ներքին բերքերէն դուրս հանա-  
ծէն աւելի քանակութեամբ արտաքին  
բերք ներս մտցնելու հարկին մէջ գըտ-  
նուելուն պատճառաւ :

Տնտեսագիտական սկզբունք մ'է  
թէ, որ երկրին վաճառահանութիւնը  
որ վաճառաբերութեանէն նուազ է՝ այն  
երկրին մէջ փոխանակագրոյն գինը միշտ  
սուղ կըլլայ, հետեւաբար ո՛ր երկրին  
մէջ որ փոխանակագրերը սուղ են՝ նոյն  
երկիրը ուշ կամ կանուխ դրամական  
նեղութեան ու նուազութեան մը պի-  
տի վիճակի, վասն զի փոխանակու-  
թեան կամ թղթի տեղ միշտ մետաղ-  
եայ դրամ դուրս հանուելու վրայ կը  
գտնուի վաճառաբերութեան յաւել-  
եալ մասը ատով փոխարինելու և հա-  
կալիւնելու համար :

Եւ ասա ճիշդ այս վիճակին մէջ կը  
գտնուի այժմ Գերմանիա, արդի դա-  
րուն Լիւդիան, զոր էբը օրինակ մի-  
այն յառաջ բերենք, եթէ իւր աշխա-  
տութեանց արդիւնքը ճոխացնելու

այժմէն փոյթ չը տանի, և եթէ Գեր-  
մանիա այսպէս, հապա Տաճկաստան  
ինչ պիտի ըլլայ, որ դրամական առժա-  
մանակեայ հարստութիւն մը չունենա-  
լէն զատ, ներքին աշխատութեան ար-  
դիւնք մ'ալ արտադրելու վիճակէն ու  
կարողութեանէն զուրկ կը գտնուի :

Տաճկաստանի ներքին գանձային  
վիճակն մինչև Արևելեան վերջին պա-  
տերազմը, 1834, նկատողութեան առ-  
նող մէկը չը կար, վասն զի մինչև այն  
ատեն Օսմանեան երկտական կացու-  
թիւնը լաւ և գոհացուցիչ վիճակի մը  
մէջ կը նկատուէր, որոյ բոլոր ու-  
նեցած ընդհանուր պարտքը, որ հազիւ  
25—30 միլիոնի կը հասնէր, ներքին փո-  
խառութեան մը ուրիշ բան եղած չէր,  
և որոյ պարտականութեանց կատարու-  
մէն ալ, ինչպէս յայտնի է, կարի ա-  
ռածիդ և ընդարձակ ապարեզ մ'ու-  
նէր :

Տաճկաստան, Արևելեան պատե-  
րազմին առթիւ բոլր առաջին անգամ  
Արևմտեան տէրութեանց հետ մօտէն  
յարաբերութեան մէջ մտաւ, տեսաւ  
և զգաց թէ իւր երկրին այլ ևս եւրո-  
պական միւս տէրութեանց շարքին մէջ  
արժանաւոր տեղ մը բռնած կենալու  
համար, իւր նախորդ պիւճէն անբա-  
ւական էր, ուստի առաջին անգամն  
ըլլալով արտաքին մեծ փոխառութեան  
մը պէտքն զգաց, և Արևմտեան երկու  
դաշնակից տէրութեանց աջակցու-  
թեամբ ու ապահովութեամբ՝ յաջող  
փոխառութիւն մ'ըրաւ :

Փոխառութիւն մը, որ պարտուցյա-  
ւելում կենթադրէ, միշտ նեղութիւն  
ու ծանրութիւն մը կը պատճառէ եւ-  
մբտական կացութեան մը վրայ և վար-  
կի նուազում յառաջ կը բերէ, եթէ  
այդ գումարը՝ դորա յառաջ բերած  
պարտականութիւնքը (engagements)  
կատարելու դիւրութիւն տուող արդիւ-  
նաւէտ աղբիւրներ ստեղծելու չը գոր-  
ծածուի, հետեւաբար ամեն փոխառու-  
թիւն, զայդ կնքողին վասակար չըլ-  
լալու համար, իմաստուն մատակարա-  
րութիւն մը կը պահանջէ : Տաճկաստան  
արդարեւ առաջին քայլն առաւ արտա-  
քին փոխառութեան մը մէջ, — մանա-  
ւանդ որ արտաքին փոխառութիւն մը՝  
ներքին փոխառութեանէն շատ աւելի  
ճշգրիտ կատարում մը կը պահանջէ  
պարտականութեան —, սակայն այդ  
փոխառութեանէն իւր գանձային մինչև  
ցայն վայր խաղաղ վիճակին մէջ խան-  
գարում մը յառաջ չը գալու համար  
պէտք եղած իմաստուն մատակարա-  
րութիւնը չը կըցաւ ունենալ, թէպէտ  
ունեցաւ բաւական մեծահանճար և  
դիւանագէտ Պետական անձինք : Այդ-  
անհրաժեշտ հարկ եղած իմաստուն  
մատակարարութեան մը պակասութե-  
անէն էր որ Տաճկաստան հետզհետէ եր-  
կու տարին անգամ մը նոր փոխառու-  
թիւն մ'ընելու առաջնորդուեցաւ, նա-

խորդ փոխառութեան մը պարտականութիւնը որ փոխառութեամբ մը միայն կարենալ վճարելու հարկին մէջ գտնուելով, որով և քան տարուան մէջ իւր պարտոց գումարն մինչև 200 միլիոնի բարձրացաւ, ուր կը դառնուի այսօր :

Վախճանեալ Ալի և Յուսէօ բաշաներն առաջին Պետական անձինքն նշան որք տեսան և զգացին թէ Տաճկաստանի այսպէս փոխառութեանէ ի փոխառութիւն դիմելու հարկը որ ալ զինքք անդունդը գահավիժելու պիտի առաջնորդէր, ուստի խորհեցան արտաքին պարագրք ներքին հաստատելոց յաւելմամբ վճարելու սկզբունք հաստատել : Սկզբունք արդարացի էր, իսկ միջոց կը պահուէր, որն որ ոչ այլ ինչ էր՝ բայց եթէ ազդու մղում և յառաջադիմութիւն մը տալ երկրին աշխատութեան և ձեռարուեստական վիճակին՝ միանգամայն և բարգաւաճել տէրութեան ներքին հարստութեան աղբւրներն, որք անթիւ ըլլալովին հանդերձ տակաւին իրենց կուսական վիճակին մէջ կը գտնուէին, և ասոնք ամենը ուրիշ կերպով չէր կրնար ըլլալ բայց եթէ քաղաքային ամեն դիւրութիւն տալ ընակչաց, կենաց և ընչից ապահովութիւն, իրաւաց վայելման հուսաարութիւն, ևն. վերջապէս ընդհանուր բարեօրում մը (réforme), որոյ առաջին քայլերն ալ իրօք առնուլ փորձեցին, բայց անօգուտ :

Գանձային դժուարութիւնն այն ատիճան մեծցած էր որ կառավարութեան պաշտօնեայք ամեն օր և ամեն ժամ նորանոր երեւան ելած դրամական անհրաժեշտ պէտքը գոհացնելու առօրեայ միջոցներ խորհելու և ի գործ դնելու հարկին մէջ կը գտնուէին, այս կերպիւ երկիրը ներքնապէս վերանորոգելու պէտքը օր աւուր ձգելու հարկադրուելով, որով և երկրին վերանորոգիչն ըլլալու բարձր արժանիք մ'ու յատկութիւն ունեցող Ալի և Յուսէօ Գանձային պետական անձինքն բոլոր իրենց պաշտօնեութեան միջոցին մէջ դրամական խնդիրներու առօրեայ լուծման սպառելով բոլոր իրենց հանճարն, անցան գնացին, բայց երկրին ներքին վիճակն ինչ որ էր՝ նոյնը մնաց չըսելու համար թէ առաւել ևս վատթարացաւ : Ասոնց յաջորդող միւս պաշտօնեութիւններն ալ իրենցմէ աւելի երջանիկ և յաջող վիճակ մը չունեցան : Սակայն գոնէ այն ատենէն ի վեր սա՛ անուրանալի ճշմարտութիւնը երեւան ելաւ թէ, Տաճկաստան գէթ դրամական ընդարձակ հանգստութիւն մը պէտք էր վայելել, որպէս զի պաշտօնեութիւնն ալ ազատելով շարունակ և յարատե դրամական պիտոյից խընդիրներովն զբաղելէ, ուշադրութիւնն ու ջանքը երկիրը ներքնապէս բարեօրելու և վերանորոգելու մեծ գործոյն

դարձնէր, եւ այս ալ ուրիշ կերպով չէր կրնար ըլլալ, բայց եթէ մէկ քանի տարիներու դրամական պէտքերը միանգամ հոգացող մեծ փոխառութիւն մ'ընելով :

Ալի բաշայի մահուանէն ի վեր բաղձացեալ դրամական անդորրութեան տարին վերջապէս ապահովեալ կերևի այս անգամ Մեծ Եպարքոս Հիւսէյին Ալիի բաշայի օրովը, ուստի և հիմայ մեծ խնդիրը կը մնայ գիտնալ թէ ինչպէս և ի՞նչ բանի պիտի գործածուի անդորրութեան այս ժամանակը :

Նախարարաց ժողովն իւր վերջին նիստին մէջ որոշեց ի յատուկ յանձնաժողով մը կարգել Օսմանեան կայսերական Պանքային նորոգ պատրաստած կանոնադրութիւնը քննելու համար : Յիշեալ յանձնաժողովոյ անդամ ընտրուած են Գանձուց պաշտօնեայ Եուսուֆ բաշայ, Մաքսատրոց վերատեսուչ Ղալիպ պէյ, և ուրիշ մէկ քանի բարձրաստիճան պաշտօնատարներ :

Մեծ Եպարքոսը կ'ըսէ լեւանթ-չերալա, յանձնարարութիւն ըրեր է առևարական գործոց պաշտօնեայ Գապուրի բաշայի, ծխախոտի Մենալաճառութեան խնդիրը նկատողութեան ու քննութեան առնելու, որն որ ի գործ դրուած էր արդի վիճակին մէջ արգելք մ'է եղեր յիշեալ տնկոյն մշակութեանը, արդիւնք ունենալով իրեն Գանձուն ալ խիստ նուազ հասոյթ մը բերելը :

Արդարև ծխախոտի մշակութեանը խիստ կարելի է՝ ուրիշ ո և է երկիրներու հետ բաղդատմամբ՝ Տաճկաստան մէջ աւելի մեծ արգասաւորութիւն մը տրուել, բայց այս արդիւնքը ձեռք ձեռք համար հարկ է որ հասոյթն աւելցնելու յատկացեալ միջոցներուն գործածութիւնը՝ դորա արդիւնաւորութեան ու սպասման վրայ ազդեցութիւն ունեցող տեղական և մասնաւոր պարագայիցն ու պայմաններուն յարմարցուի մինչդեռ ծխախոտի Մենալաճառութեան այսօրուան օրս ի գործ դրուած օրէնքը՝ առանց այդ վերոյիշեալ պայմաններն ի նկատի առնելոյ շինուեցան, ուրիշ բան չ'ընելով բայց եթէ թէժիկ այդ օրէնքն ամբողջապէս Գաղղիոյ թէժիկ օրէնքէն կէտ առ կէտ օրինակելով, և ասի ալ հաւանականաբար անոր համար թէ՛ թէժիկ դրութեան ամենէն աւելի գերազանց արդիւնք մը ձեռք բերող երկիրը Գաղղիոյ եղած է :

Այսպիսի ընդօրինակեալ օրինաբարութիւն մը բնական էր թէ չը պիտի յաջողէր ծխախոտի գէպքին մէջ, ինչպէս որ նմանօրինակ ջանք մ'ալ անյաջող ելած էր անկէ յառաջ հանքային օրէնսդրութեան մը մէջ : Տաճկաստանի հանքային օրէնքն ալ ճշդիւ Գաղղիոյ

անտառական օրէնքէն ընդօրինակուած էր, և որ փորձով տեսնուեցաւ թէ փոխանակ այդ ճարտարութիւնն պահպանելու և յառաջացնելու, ինչպէս կը յուսացուէր, ընդհակառակն դորա բարգաւաճման արգելք մ'եղած եղաւ :

Նոյնը պիտի ըլլայ նաև դրոշմի տրոց նկատմամբ, որն որ նոյնպէս Գաղղիոյ օրէնքէն քաղուած է, և զոր այժմէն աւելի ընդարձակել եթէ ուղուի :

Գապուրի բաշայ յիշում այս պարագայները նկատողութեան առնելով, տարակոյս չը կայ թէ գործնական տեսակետի մը տակ պիտի քննէ զատուք և պիտի տեսնէ թէ օտար երկրի մը սովորութեանց և ունակութեանց կոյր ըլլալու այն հետեւելով չէ՛ որ երկրի մը հասոյթը կարելի է արդիւնաւորել և անցնել :

Աւսարօ-Հունգարիոյ դեպքան Ղիչի կոմսը շաբաթ երեկոյեան մօտ երբ դեպքանական պալատէն կառք նստելով ճանբայ կ'ելնէր մեծ Եպարքոսին երթալու, կառքին ձիերը խրտելով դէպ ի քովնսի կ'երթան, ուր գտնուած փայտէ վանդակաձողերը խորտակելով, թօմ թօմ փողոցին վերէն ի վար մէկ կողմը գտնուած խրամատին մէջ կը գահավիժին, բարեբաղդարար դեպքանը ժամանակ չը կորսնցնելով կառքին դուռնակը բանալուն պէս իւր առաջին թարգմանին հետ դուրս կը գաթկէ մօտալուտ վտանգէ մ'ազատելով, կառքը թէպէտ փոսին մէջ չ'իջնար, սակայն ապակիները կը խորտակին, և կառքանն ալ վար ոստնուլ ուզելով կառքին տակը կ'երթայ, որով թէ՛ ինքն և թէ՛ ձիերը մեծապէս կը վնասուին ու կը վիրաւորուին :

Նմանօրինակ դէպքեր ասկից յառաջ ուրիշ երկու անգամ ալ պատահած է մօտերս գարձեալ նոյն տեղը, ուր նոյն պէս նոյն խրամատին մէջ գահավիժեր էին մէկ մը Շարլ Լուի արշիդքսին հեծած կառքը, մէկ մ'ալ Սուրբանին առաջին սենեկապետ Համտիպէյին կառքը, որ Աւսարիոյ դեպքանատունը ճաշելու կ'երթար :

Այս յաճախ արկածները յուսալիկ է թէ բաւական կ'ըլլան հարկադրել Քեթրայի թաղապետութիւնը որ յիշեալ խրամատին առաջը գտնուած վայտէ վանդակաձողերուն տեղ որմնացանկ մը բարձրացնէ :

Բուժելիէն կը գրեն թէ վարնաբուժուածքի երկաթուղոյն անցած տեղերը հասարակաց ապահովութեան վիճակը երթալով նուազելու և վատթարանալու վրայ կը գտնուի, մէկ քանի կայարաններու մէջ յարձակմամբ գողութիւններ պատահեր են, և ուրիշ կայարան մ'ալ խուճա մը շարագործաց կողմանէ քանի մը ժամ պաշարեալ մնացեր է :

Ուրիշ հեռագիր մ'ալ կը ծանուցանէ թէ հինգշաբթիէն ուրբաթ լուսնա

լու գիշերը հեղեղանման անձրև տեղալով, շուրերը քիւսթէնճէն մինչև Մուրֆաթլարի կայարանին մէջ տեղը գտնուած երկաթուղւոյ գիծերը 3 հազար մետր տեղ ողողեր և մեծ վնաս պատճառներ են, որոյ վրայ երթևեկութիւնը 3-4 օր ընդհատել հարկ եղած է:

Ա. Զ. Դ.

Բարեգործական ընկերութեան Տընօրէն ժողովը պարտք կը համարի հըրաւիրել ընկերութեան բոլոր անդամներն, որք կազմեն շարունակել իրենց անդամակցութիւնը, բարեհաճին ներկայ 1874 տարւոյ բաժանորդագիրն վրձարելով ընդունել իրենց անդորրագիրը կիւղէլեան Պէտրոս էֆէնտիի գրասենեակէն (Մեծ Հալիլ բաշա խան թիւ 3. 'ի Ղալաթիա) մինչև տարւոյս վերջը: Որպէս զի Ընդհ. ժողովոյ գումարման օրը, ընկերութեան անդամոց ճիշդութիւնը յայտնի ըլլալով, հիմնական կանոնադրութեան համաձայն հարկ եղած անօրէնութիւններն կարենան օրինաւորապէս որոշուիլ:

1874 Նոյեմբ. 4 - Ղալաթիա  
Տնօրէն ժողով Բարեգործական ընկերութեան: (Կնիք)

Մեծարդոյ Տէօթէօր Գ. ՃիվԱՆԵԱՆ Փարիզի ատամնաբոյժը, որ արդէն ցաւոտ և փտած ակունքու բժշկութեան, դարմանի և նոր ակոյ շինելու մասին մինչև ցարդ ունեցած յաջողակութեամբ ծանօթ է մայրաքաղաքիս հասարակութեան, իւր տունը փոխադրած է այժմ Պէշքեթալ Բէօյ-իչի, Գարանիի Պարալ փողոցը թիւ 87, ուր ամեն օր կ'ընդունի իրեն դիմողները:

Բուսէլիի երկաթուղեաց երեկուան 29րդ. վիճակահանութեան պարգևաւա

Table with 4 columns: 5th column (values), 6th column (values), 7th column (values), 8th column (values). Includes section 'Հող թիւերն են:' and '400 Ֆրանդ շահողք են'.

Table with 4 columns: 9th column (values), 10th column (values), 11th column (values), 12th column (values).

ԵՂԱՍՅՐ ԹԱԿՈՒՌՈՍ  
ՀԵՂԻՆԱԿ  
Կ. ԲՕԼ ՏԸ ՔՕԲ  
ՀՐԱՏԱՐԱԿԻԶ  
Մ. Խ. ԵԷՎԵԼՃԵԼԻ  
ՏԵՏՐ Ը.

15 տետրէ բաղկացեալ հետաքրքրական և ծիծաղաշարժ պատմութիւն մ'է, որ տետր առ տետր պիտի հրատարակուի գին միոյ տետրի 40 փարայ կը ծախուի Մահմետ-Բաշայ Թօհաֆճի Ճանիկ աղայի խանութը, բոլոր Հայ գրավածառներու և կամուրջի գլխու պարտքան և լրագրածախ ձրուիչներու ձեռամբ:

Մասնաւոր դատարանութիւն  
Պրանսիոյ և Անգլիոյ լիբերալ իրաւունքներ  
'ի վերջնական Գրատան ԿՅՐԷՆԿԵԱՆ  
Ղան այցելութեամբ  
Վարժարան թանկացութեան  
Թարգմանութիւն Վրացերէն  
Թղթակցութիւն վաճառականական  
Եւ Եւ  
Ա. Մ. ԳԱՐՆԵՆՅԱՆ

ՏԷՐ ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ  
ՕԳՄԷՆ ԽՈՃԱՍԻՐԵԱՆ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Օ. ԻՃԱՍԱՐԵԱՆ  
ԵՌԻՍՏՈՒՔԵԱՆ-ԻՍԷՆ  
ՎԵՐԻ ԹԱՐԿ ԲԻԻ 7